№6

Մենք հավասար ենք

Տեղեկատվական թերթիկ

Սեպտեմբեր 2008

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Կյանքը շարունակվում է

Օգոստոսի 29-ին ՀՀ մշակույթի նախարարության և «Ունիսոն» հասարակական կազմակերպության համատեղ ջանքերով երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում Գյումրու թիվ 40 դպրոցում տեղի ունեցավ «Կյանքը շարունակվում է» խորագրով հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների ցուցահանդես: Ներկայացված նկարները, կավե և փայտե գործերը, գոբելենները և այլ նմուշները մեծ հետաքրքրություն առաջացրին այցելուների մոտ:

Նման ցուցահանդեսներ անցկացվելու են նաև Սպիտակում, Վանաձորում և Երևանում: Մինչև սեպտեմբերի 30-ը ներկայացված աշխատանքները մասնակցելու են հաշմանդամ ստեղծագործողների հանրապետական մրցույթին:

Ցուցահանդեսին հաջորդեց կլոր սեղան-քննարկում, որը կազմակերպվեց Բաց Հասարակության Ինստիտուտի և Նիդեռլանդների Կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում: Գյումրիում հաշմանդամությանը վերաբերող արդիական խնդիրներին հաճախ են անդրադառնում հեռուստատեսությամբ, մամուլում, տարբեր քննարկումների ժամանակ: Պատճառը, թերևս, այն է, որ 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով բազմաթիվ մարդիկ հաշմանդամ դարձան: Այնուամենայնիվ, գործնականում հաշմանդամների կյանքի բարելավմանն ուղղված միջոցառումները դանդաղ են իրականացվում:

Կլոր սեղանին ներկա գտնվող մարզպետարանի, քաղաքապետարանի, տեղական ՀԿ-ների, բժշկական և կրթական հաստատությունների ներկայացուցիչները համակարծիք էին տիրող իրավիճակի գնահատման հարցում. հաշմանդամները մեծ խոչընդոտների են հանդիպում միջավայրի ֆիզիկական մատչելիության, կրթության, զբաղվածության, մշակույթի և այլ ոլորտներում: Հիմնախնդիրների լուծումը ձգձգվում է ինչպես օբյեկտիվ պատճառներով, այնպես էլ հասարակության կարծրատիպային մտածելակերպի հետևանքով:

Քննարկման արդյունքում «Ունիսոնի» և տեղական ՀԿ-ների միջև նախանշվեցին համագործակցության լուրջ եզրեր, ինչը Շիրակի մարզում հաշմանդամների իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացման հույս է ներշնչում:

Ցուցահանդեսը և կլոր սեղանը լուսաբանվեցին «Գալա» և «Տայգ» հեռուստաալիքների կողմից:

Իսրայելում սայլակավոր հաշմանդամներին վերադարձնում են քայլելու ունակությունը

Իսրայելցիների հայտնագործության շնորհիվ մարդիկ, որոնք մարմնի ներքին հատվածի կաթվածի պատճառով տարիներ շարունակ զրկված են եղել քայլելու հնարավորությունից և տեղաշարժվելու համար օգտվել են միայն սայլակից, ի վիճակի կլինեն ոտքի կանգնել և քայլել:

Argo Medical Technologies իսրայելական ընկերության կողմից ստեղծված ReWalk («կրկին քայլիր») հարմարանքը իրենից ներկայացնում է կաթվածահար ոտքերի համար էլեկտրոնային ղեկավարումով «արտաքին կմախք»: Հագնելով այն՝ հաշմանդամը կարող է ինքնուրույն ոտքի կանգնել և նստել, քայլել, բարձրանալ և իջնել աստիճաններից:

ReWalk-ը հաշմանդամի սայլակի առաջին իրական այլընտրանքն է: Արդեն այսօր «արտաքին կմախքի» հնարավորություններից օգտվում են մի քանի իսրայելցի հաշմանդամներ:

Այս հարմարանքը կարելի է օգտագործել նաև ուղեղի վնասվածք ստացած և ուղեղի արյան շրջանառության սուր խախտումներով հիվանդների վերականգնման նպատակով:

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Իրավաբանի անկյուն
Հարց և պատասխան

Ես 2-րդ խմբի հաշմանդամ եմ: Ցանկանում եմ զբաղվել ձեռնարկատիրությամբ: Նախատեսված են արդյո՞ք ՀՀ օրենսդրությամբ հարկային արտոնություններ կամ դրամական աջակցություն հաշմանդամ ձեռնարկատերերի համար:

Լ.Ամյան, 33 տ., ք. Ստեփանավան

Գործող օրենսդրությունը նախատեսում է հաշմանդամին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհատույց ֆինանսական աջակցության տրամադրման հնարավորություն: Անձին ֆինանսական աջակցության ծրագրով տրամադրվող ֆինանսական միջոցներն օգտագործվում են նրա որպես անհատ ձեռնարկատիրոջ կամ իր կողմից հիմնադրվող առևտրային կազմակերպության պետական գրանցման համար: Հարկ է նշել, որ ֆինանսական աջակցության ծրագրում կարելի է ընդգրկվել միայն մեկ անգամ: Անձը ֆինանսական աջակցության ծրագրում ընդգրկվելու համար զբաղվածության տարածքային կենտրոն պետք է ներկայացնի գործարար ծրագիր՝ 2 օրինակից:

Այն ներառում է՝

ա) ընդհանուր բաժին (այս բաժնում նշվում են գործարար ծրագրի նպատակը, խնդիրները և նոր ստեղծվող տնտեսավարող սուբյեկտի գործունեության կազմակերպական-իրավական ձևը).

բ) գործունեության տեսակը (արտադրվող ապրանքների անվանացանկը և (կամ) կատարվող աշխատանքների տեսակները և (կամ) մատուցվող ծառայությունների անվանումները).

գ) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացման շուկան (ապրանքների իրացման, աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման տեղը, ծավալը).

դ) տեղեկություններ մրցակիցների մասին.

ե) ռիսկերի կանխատեսումը .

զ) գործարար ծրագրի ֆինանսական նկարագիրը (գործարար ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհատ ձեռնարկատիրոջ կամ առևտրային կազմակերպության պետական գրանցման համար տրամադրվող գումարի չափը և սեփական ներդրումների չափը՝ կցելով այն հիմնավորող փաստաթղթերը):

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անձին անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն գրանցելու համար տրվում են ֆինանսական միջոցներ՝

ա) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի վճարման նպատակով անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, իսկ առևտրային կազմակերպություն գրանցվելու համար՝ 12-ապատիկի չափով.

բ) ֆիրմային անվանումը գրանցելու նպատակով պետական տուրքի վճարման համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով.

գ) կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն գնի չափով:

Իզաբելլա Կարապետյան,
«Ունիսոն» ՀԿ իրավաբան

Մասնակցե՛ք մրցույթներին և հաղթե՛ք

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը և «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը ՀՀ-ում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում անցկացնում են **հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների հանրապետական մրցույթ**:

Մրցույթին կարող են մասնակցել ցանկացած տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք առանց տարիքային սահմանափակման:

Սահմանված են հետևյալ անվանակարգերը՝

1. **Գոբելեն և ասեղնագործություն**
2. **Գեղանկարչություն**
3. **Փորագրություն և խեցեգործություն**

Յուրաքանչյուր անվանակարգում սահմանված է 4 մրցանակ (մեկ գլխավոր, մեկ հատուկ մրցանակ «Երկրաշարժն իմ աչքերով» թեմայով և խրախուսական մրցանակներ):

Զուգահեռաբար «Ունիսոնը» անցկացնում է **16-40 տարեկան հաշմանդամ կանանց գեղեցկության ֆոտոմրցույթ**:

Երկու մրցույթների մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Ձեռքի աշխատանքները և գեղեցկության մրցույթի մասնակիցների լուսանկարներն ընդունվում են **մինչև սեպտեմբերի 24-ը**:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 52-21-70 հեռախոսահամարով:

«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը
հաշմանդամներին անվճար տրամադրում է

- զբաղվածության կենտրոնի ծառայություններ (տեղյուսեի կազմում, հարցազրույցին նախապատրաստում և այլն)
- իրավաբանական խորհրդատվություն
- հոգեբանական աջակցություն

Անցկացվում են նաև կերպարվեստի պարապմունքներ:

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի և Նիդերլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Լոլան և Ռայթերը տեղաշարժվում են հատուկ երկանիվ սայլի միջոցով, որը ստեղծվել էր իրենց համար Նյու Յորքի հիվանդանոցներից մեկում

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան

Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ,
Երևան 0002, Դեմիրճյան 36

Հեռ./ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
Էլ. փոստ՝ unison@unison.am